community

The New Apostolic Church around the world

02/2018/AM

Պապուա Նոր Գվինեայի ճանապարհին

Խմբագրական՝
Կիրակին տոնել

Ժամերգություն՝
Աստվածային ընծաներ

Եկեղեցական ուսմունք՝
Փրկությունը նոր արարչագործության մեջ և կոնֆիրմացիայի երդում

New Apostolic Church
International

Կիրակին տոնել

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ եղբայրներ ու քույրեր,

Օրհնաշատ ավանդույթ է, որ մենք՝ որպես քրիստոնյաներ տոնում ենք կիրակին։

Մենք խոստովանում ենք Հիսուս Քրիստոսի հարությունը։

Շաբաթվա ընթացքում մենք որոշ անարդարություններ ենք ապրում, տեղեկանում ենք աշխարհում տեղի ունեցող շատ վատ բաների մասին։ Եվ, հետո մենք կիրակի օրը հավաքվում ենք և խոստովանում՝ ,,Չնայած դրան՝ մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը հարություն է առել։ Նա հաղթել է մահին, չարին, մեղքին։ Նա իրավացի է, նրանն է վերջին խոսքը,,։ Դա մի հիանալի ձև է շաբաթն ամփոփելու և նոր շաբաթ սկսելու համար։

Մենք խոստովանում ենք մեռելների հարությունը և հույս ունենք մեր սեփական կերպարանափոխության։

Մենք սպասում ենք մեռելների հարությանը և ողջերի կերպարանափոխությանը։ Եվ, մենք միշտ ինչ էլ ապրենք, ինչ էլ անենք, ինչ էլ տեսնենք, մեր հույսը հիմված է Քրիստոսի գալստյան վրա։ Եթե միշտ կիրակի օրերին հավաքվում ենք ժամերգության և մեր կյանքում առաջին տեղը տալիս ենք ամենակարևորին, մենք ցույց ենք տալիս, որ խոստովանում ենք հոգուտ բարու։

Մենք խոստովանում ենք, որ կանենք բարին։

Մարդիկ տարբեր պատճառներով ցույցեր են անում, քանի որ նրանք ուզում են ցույց տալ ,, Մենք համաձայն չենք այս կամ այն բանի հետ։ Մենք դա այլ ձևով ենք տեսնում,,։ Որպես քրիստոնյաներ՝ մենք համաձայն չենք անարդարության, չարի տիապետության հետ։ Եվ մենք դա նաև ցույց ենք տալիս, երբ կիրակի օրերին հավաքվում ենք ժամերգության։ Մենք հավատում ենք չարի դեմ բարու հաղթանակին։ Մենք հավատում ենք Հիսուս Քրիստոսի հարությանը և գալստյանը։

Եկեք այսպես տոնենք յուրաքանչյուր կիրակի։

Սրտանց ողջույններ, Ձեր՝

Ժան – Լյուք Շնայդեր

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը տասնմեկ օր Ավստրալիայ և Պապուա Նոր Գվինեա կատարած ճանապարհորդության մեջ էր: Սեպտեմբերի 28-ին՝ հինգշաբթի օրը նա մեկնում է Քոմբիքում՝ բերքահավաքի շնորհակալության ժամերգության

Լուսանկարը՝ ՆԱԵ Ավարալիա

Աստվածային նվերներ

Սիրելի քույր-եղբայրներ, մեզ համար մեծ ուրախություն և մեծ ողորմածություն է այս ժամերգությունը ձեր շրջապատում ապրելը: Սա մի առանձնահատուկ ժամերգություն է:Այսօր մենք տոնում ենք բերքի շնորհակալության տոնը: Մենք շնորհակալություն ենք հայտնում Աստծուն այն ամենի համար, ինչ նա մեզ նվիրել է: Պարզ է, որ Աստված մեր շնորհակալության և զոհաբերության կարիքը չունի : Նա այնպիսին չէ, ինչպես մենք ենք՝ մարդիկս: Մարդիկ, ովքեր ինչ- որ բան են անում կամ տալիս, սովորաբար սպասում են շնորհակալության, և, եթե ոչ ոք նրանց շնորհակալություն չի հայտնում, նրանք տխրում են կամ նույնիսկ զայրանում: Սակայն, Աստված կարիք չունի ոչ մեր շնորհակալության, ոչ էլ՝ մեր զոհաբերության: Միակ բանը, որի համար նա մեզնից

2-րդ թուղթ Կորնթացիներին 9,8

,, Եվ Աստված կարող է ամեն շնորհ շատացնել ձեր մեջ, որպեսզի ամեն ինչում ամենայն ժամ ամենայն բավականություն ստանալով՝ առատանանք բոլոր բարի գործերում,,:

հավանաբար շնորհակալություն կուզենար՝ այն է, որ մենք դրանով ավելի շատ օրհնություն ստանանք: Ի՞նչ ենք անում մենք, երբ նախապատրաստվում ենք բերքի շնորհակալության: Մենք թվարկում ենք Աստծո ողորմածության բազում ընծաները: Այս առումով մենք գիտակցում ենք, որ մեր երկնային Հայրը մեզ ամեն ինչ է նվիրել: Մենք գիտակցում ենք, թե ինչ արտակարգ է նրա ողորմածությունը մեր հանդեպ: Եվ, մինչ մենք կնախապատրաստվենք բերքի շնորհակալությանը, գիտակցում ենք, թե մենք ինչ հարստություն ունենք Աստծով: Օրհնանքը կայանում է նրանում, որ մենք խոստովանում ենք, թե ինչ հարուստ ենք Աստծով: Եվ ուրախություն էայն օրհնանքը, որը մենք ստանում ենք այսօր:

Այստեղ առաքյալը գրում է, որ Աստված մեզ համար լիառատ ողորմածություն ունի: Երբ մենք տոնում ենք բերքի շնորհակալությունը, խոստովանում ենք մեր հավատը Հայր Աստծո հանդեպ: Մենք հավատում ենք, որ ամեն ինչ գալիս է Հայր Աստծուց: Մենք հավատում ենք, որ Աստծո մոտ կյանք կա, քանի որ Աստված է մեզ կյանք նվիրել: Հայր Աստված հեղինակն է ողջ կյանքի: Կյանքը գալիս է միայն Աստծուց, և դրա համար մենք շնորհակալ ենք: Մենք՝ մարդիկս, դա չենք կարող անել: Կյանքը հնարավոր է, քանի որ ԱրարիչԱստվածն է դա նվիրել: Հայր Աստված Արարիչն է ստեղծել աշխարհը, բնությունը և դրանք որպես նվեր վստահել է մարդկանց՝ ,,Ես ձեզ եմ տալիս, բնությունը, արարչագործությունը,,: Դա նվեր է Աստծո կողմից: Նա մեզ է նվիրել կատարյալ արարչագործությունը, և այդ նվերի համար մենք շնորհակալ ենք:

Նա մեզ ավելին է նվիրել, քանի որ նա պահպանում է իր արարչագործությունն ու ստեղծած կյանքը: Հայր Աստված մեզ առողջություն է տալիս: Հայր Աստված մեզ ուժ է տալիս, որի կարիքը մենք ունենք, որպեսզի աշխատել կարողանանք ու Աստված օրհնում է մեր աշխատանքը: Առողջությունը ողորմածություն է: Մենք դա չենք կարող ինքներս վաստակել: Ես կարող եմ ձեզ ասել, ես շատ մարդկանց եմ ճանաչում, ովքեր ավելի լավն են, քան՝ ես: Նրանք սխալ բաներ չեն արել, սակայն նրանք հիվանդ են: Ես գիտակցում եմ, որ առողջությունն իսկապես ողորմածություն է: Մենք դա չենք կարող ինքներս վաստակել, և դրա համար մենք շնորհակալ ենք: Աստված մեզ նվիրում է նաև ունակություն և ուժ, որոնց կարիքը մենք ունենք, որպեսզի մեր աշխատանքը կարգավորենք: Դա ևս ողորմածություն է: Ես ճանաչում եմ մարդկանց, ովքեր ծանր աշխատանք են կատարում, բայց հաջողության չեն հասնում: Եթե Աստված աշխատանքը չի օրհնում, ապա այն հաջողություն չի ունենում: Մենք պետք է Աստծուն այն բանի համար

> Աստված մեզ նվիրում է ոչ միայն մինիմալը, այլ՝ առատորեն, որպեսզի կարողանանք բարի գործեր կատարել:

Պապուա Նոր Գվինեայում ժամերգությանը մասնակում էր ավելի քան 24. 000 մասնակից:

շնորհակալություն հայտնենք, որ նա մեզ նվիրել է առողջություն և ուժ ու օրհնել է մեր աշխատանքը:

Աստված նաև մեզ նվիրել է մարդիկ, ովքեր շրջապատում են մեզ: Ողորմածություն է ամուսին կամ կին ունենալը: Առանձնահատուկ ողորմածություն է երեխաներ ունենալը: Անգամ ողորմածություն է այլ մարդկանց քո շուրջն ունենալը: Մեր կյանքը շատ ծանր կլիներ, եթե մենք միայնակ լինեինք: Հաճախ մենք ուրիշների օգնության կարիքն ենք ունենում : Ողորմածություն է ընտանիքի անդամ լինելը: Մեծ ողորմածություն է ժողովրդի մասնիկը լինելը: Եվ Աստված իր սիրով ու իմաստությամբ մեզ տվել է օրենք՝ պատվիրանները: Եվ դա ողորմածություն է; եթե մենք գործում ենք այդ պատվիրանների համաձայն, կյանքը միմյանց հետ կարող է խաղաղ ու հարթ լինել: Մենք Աստծուն շնորհակալ ենք իր պատվիրանների, իր օրենքի համար: Եթե մենք այդ օրենքները կատարենք, մեր կյանքը խաղաղ ու հարթ կլինի: Մենք շնորհակալ ենք Աստծուն այն ամենի համար, ինչ մեզ է նվիրել՝ արարչագործություն, կյանք, առողջություն, ուժ և օրհնանք,շնորհակալ ենք մեզ շրջապատող մարդկանց համար և աստվածային պատվիրանների համար: Մենք գիտենք և նաև հավատում ենք, որ Աստված մեզ բավարար չափով է տվել, որպեսզի կարողանանք բարի գործեր կատարել: Սակայն, նա մեզ նվիրում է ոչ միայն մինիմալը, այլ՝ առատորեն, որպեսզի մենք կարողանանք բարի գործեր անել:

Ինչպե՞ս են երևում այդ բարի գործերը: Առաջին բարի գործը, անշուշտ, դա մեր շնորհակալությունն է Աստծուն: Մենք նրան շնորհակալ ենք բոլոր ընծաների համար, որը նա մեզ է նվիրել: Մենք կարծում ենք, որ նա մեզ բավարար չափով է նվիրել, որպեսզի մենք կարողանանք շնորհակալություն հայտնել: Մենք միշտ բավարար չափով ենք ունենում, որ Աստծուն շնորհակալական զոհաբերություն կատարենք՝ ,,Դա պատկանում է քեզ, քանի որ դու մեզ օրհնել ես,,:

Քույր-եղբայրներ, մենք պետք է դրսևորենք այսպիսի ուժեղ հավատ : Աստված միշտ մեզ առատորեն է նվիրում, որպեսզի մենք մեր զոհաբերությամբ կարողանանք նրան շնորհակալություն հայտնել: Մենք միշտ բավարար չափով ենք ունենում, որպեսզի բարի գործ կատարենք և կիսենք մեր մերձավորի հետ: Մենք կարող ենք մեզ թույլ տալ՝ ոչ միայն մեզ համար շնորհակալություն հայտնել: Նա մեզ իր արարչագործությունն է տվել: Բնության հետ շփվելիս մենք կարող ենք մեզ թույլ տալ մտածելու ոչ միայն մեր մերձավորի մասին, այլ՝ նաև հաջորդ սերնդի մասին: Մենք հավատում ենք, որ բոլորի համար բավարար չափով կա: Համապատասխանաբար հոգատար պետք է լինենք բնության և բնական ռեսուրսների հանդեպ, և չպետք է միայն մեր մասին մտածենք: Անգամ, եթե մենք չափից շատ չունենք, կարծում ենք, որ Աստված մեզ բավարար չափով է տվել, որպեսզի մենք կարողանանք մեր մերձավորին կարիքի դեպում օգնել :

Ես ճանաչում եմ շատ մարդկանց, ովքեր համաձայն չեն սրա հետ: Նրանք բողոքում են՝ ,,Մենք այնքան աղքատ ենք: Մենք բոլորովին ոչինչ չունենք,,: Որպես Աստծո զավակներ՝ մենք հավատում ենք, որ Աստված մեզ բավարար չափով է տվել, որպեսզի մենք կարողանանք մերձավորին էլ օգնել: Դա մեր հավատն է: Մենք հավատում ենք, որ Աստված մեզ բավարար կյանք է նվիրել և մենք կարող ենք մեզ թույլ տալ հետևելու նրա պատվիրաններին: Մենք ստիպված չենք մեղք գործելու, որպեսզի ստանանք այն, ինչի կարիքը մենք ունենք: Շատ մարդիկ մտածում են՝ ես կյանքի համար բավարար չափով չունեմ, ուրեմն ես զողություն կանեմ: Նրանք կորցնում են ազնվությունը, քանի որ նրանք ավելին են ուզում: Դա մեր հավատը չէ: Մենք գոհ ենք նրանից, ինչ մենք վաստակում ենք աստվածային պատվիրանները կատարելով: Մենք հավատում ենք, որ Աստված մեզ բավարար չափով

Շատ հավատացյալներ մինչև յոթ օր ոտքով ճանապարհ էին անցել: Որպեսզի նրանց համար հոգային, Քոմբիքումի շրջակայքի համայնքները դեռ ամիսներ առաջ լրացուցիչ սնունդ էին նախատեսել և կացարաններ ստեղծել:

է տվել, որպեսզի մենք կարողանանք հետևել նրա օրենքներին:

Մենք անգամ հավատում ենք, որ մենք այնքան շատ ունենք, որ կարող ենք մեզ թույլ տալ հոգալու մեր հոգիների համար: Շատ մարդիկ ասում են. ,, Ձեր եկեղեցին ինձ դուր է գալիս, բայց ես ժամանակ չունեմ եկեղեցի գալու: Գիտե՞ք, ես պետք է աշխատեմ և իմ ընտանիքը կերակրեմ,,: Մենք հավատում ենք, որ Աստված մեզ համար ամեն ինչում հոգ է տանում, ինչի կարիքը մենք ունենք, այնպես որ, մենք կարող ենք հոգ տանել մեր հոգիների համար և ,,չենք պատժվի,,; որ մենք եկեղեցի ենք գնում: Մենք կարող ենք մեզ թույլ տալ հոգալու ժամերգությունների գնալ և մեր հոգիների համար հոգալ՝ առանց առօրյան խաթարելու: Աստված մեզ բազում շնորհներ է տվել: Ողորմածությունից ելնելով՝ նա մեզ առատորեն է նվիրել, որ մենք կարողանանք շնորհակալ լինել, կարողանանք մյուսների մասին մտածել և կարողանանք մեր հոգիների համար հոգ տանել:

> Որպես Աստծո Որդիներ՝ մենք հավատում ենք, որ Աստված մեզ բավարար չափով է տվել, որ կարողանանք մերձավորին օգնել:

Մենք շնորհակալ ենք նաև Հիսուս Քրիստոսին: Մենք շնորհակալ ենք Սուրբ Հոգուն: Հիսուս Քրիստոսը՝ Աստծո Որդին, մեզ առանձնահատուկ նվեր է տվել, առանձնահատուկ ողորմածություն: Նա տվել իր կյանքը, որ մենք մասնակից լինենք հավերժական կյանքին: Նրա զոհաբերության շնորհիվ հնարավոր է դարձել, որ մենք կարողանանք հավիտենական միասնություն ունենալ Աստծո հետ և կարողանանք մուտք գործել նրա թագավորություն : Ուրիշ ոչ ոք չի կարող մահին ու սատանային հաղթել: Եվ անկեղծորեն, մենք էլ դա չենք վաստակել: Երբ Հիսուսը իր կյանքը ինձ համար

Զոհասեղանի մոտ նստած՝ շրջանային առաքյալի օգնական Էդի Իսնուգրոհո, շրջանային առաքյալի օգնական Փեթեր Շուլթե և շրջանային առաքյալ Անդրյու Անդերսեն

տվեց, ես դեռ ծնված չէի: Ոչ ոք չգիտեր, որ ես ինչ-որ ժամանակ գոյություն կունենամ:

Բայց նա ինձ այնքան է սիրել, որ զոհաբերվել է ինձ համար: Ինչպիսի ողորմածություն: Մենք դրա համար ոչինչ չենք արել, չնայած դրան՝ նա մեզ ամեն ինչ տվել է: Մենք շնորհակալ ենք Հիսուսի զոհաբերության և հավիտենական կյանքի համար:

Մենք շնորհակալ ենք Սուրբ Հոգուն, քանի որ Հիսուսի մասին պատմությունը մենք թեև կկարդայինք Աստվածաշնչում, բայց առանց Սուրբ Հոգու՝ դա մեզ ոչ մի օգուտ չէր տա: Քանի որ Սուրբ Հոգու ներգործությամբ՝ Աստծո խոսքի և խորհուրդների միջոցով մենք մասնակից ենք դառնում հավիտենական կյանքին: Սուրբ Հոգին մեզ օգնում է, այսինքն՝ մեզ համար հնարավոր է դարձնում հավիտենական կյանքին արժանանալը: Եվ նա պահպանում է այդ կյանքը՝ իր խոսքով, խորհուրդների միջոցով: Դրա համար մի առանձնահատուկ ողորմածություն է այն, որ մենք ճանաչում ենք Հիսուս Քրիստոսին և կարողանում ենք նրան հետևել: Մենք շնորհակալ ենք Սուրբ Հոգուն, որ նա մեզ ուժ է նվիրում՝ հետևելու Հիսուս Քրիստոսին:

Աստված մեզ նաև Աստծո այլ զավակներ է նվիրել: Մենք՝ բոլորս, մասնիկն ենք Քրիստոսի եկեղեցու: Ես կարծում եմ, որ համաձայն եք ինձ հետ՝ շատ դժվար կլիներ հավատարիմ մնալ, եթե մենք միայնակ լինեինք: Մենք այնքան շնորհակալ ենք, որ այսքան շատ քույր-եղբայրներ ունենք, ովքեր մեզ օգնում են, ովքեր մեզ համար աղոթում են, ովքեր մեզ հետ և մեզ համար պայքարում են:

Սուրբ Հոգոու միջոցով նա մեզ մի առանձնահատուկ պատվիրան է տվել: Գիտե՞ք Հիսուս Քրիստոսի պատվիրանը: Արդյունքն ու հաջողությունը նրա համար առաջնային չեն: Միակ բանը, որ նրա համար կարևոր է, մեր ձգտումն ու մեր սերն է: Սարսափելի կլիներ, եթե Աստծոն միայն մեր հաջողությունները թվարկեինք: Ես կարծում եմ, որ նման պարագայում մենք այսօր ավելի քիչ կլինեինք: Ամենաքիչը ես այստեղ չէի լինի, քանի որ ես Աստծուն մի քանի բան եմ խոստացել՝ այս կամ այն բանը հաղթահարել, այս կամ այն բանը թույլ տալ և նրա համար սա կամ դա անել, իսկ ես դա չեմ արել: Ես հաջողակ չեմ:

Փառք Աստծոն, նա այդ ամենը չի արժևորում: Նրա համար առաջնայինը մեր սերն է ու նվիրվածությունն իրեն, մեր ձգտումը: Եվ դրա համար էլ մենք շնորհակալ ենք Քրիստոսի այս օրենքի համար: Նա մեզ տվել է սիրո, ներման պատվիրանը: Այլապես մենք միասնություն չէինք կազմի միմյանց հետ: Դա է պատվիրանը, որ Աստված տվել է իր ժողովրդին: Դրա հիման վրա էլ հնարավոր է, որ մենք միասին և միասնական մնանք:

Սրանք աստվածային նվերներ են: Ողորմածությունից ելնելով՝ նա մեզ հավիտենական կյանք է նվիրել, որը նա պահում է իր խոսքով և խորհուրդներով: Նա մեզ ողորմածություն է նվիրել՝ լինելու Աստծո զավակների միաբանության մեջ, և նա մեզ տվել է ողորմածության, սիրո և ներման պատվիրանը: Եվ նա մեզ այնքան առատորեն է նվիրել, որ մենք կարողանանք բարի գործեր անել: Նա մեզ այնքան առատորեն է նվիրել, որ մենք կարող ենք հրաժարվել այն ամենից, ինչ բարեհաճ չէ Աստծուն: Մենք կարիք չունենք հետևելու սատանային: Նա մեզ այնքան շատ է տվել, որ մենք կարող ենք խուսափել մեր մտքերից ու կարծիքներից և կարող ենք ընդունել Հիսուսի մտքերը: Մենք այնքան շատ ենք ստացել Հիսուսից, որ մեզնից շատ բան չի պահանջվում ասելու՝,, Լավ, դու բոլորովին համաձայն չես ինձ հետ: Ես հրաժարվում եմ իմ գաղափարներից և մտածում եմ քեզ նման,,: Երբ Հիսուսը մեզ ասում է՝,, Քո մտքերն ինձ դուր չեն գալիս,,; ապա մենք ասում ենք՝ ,,Լավ, Հիսուս, ես ինձ կվերափոխեմ,,:

Մենք կարող ենք մեզ թույլ տալ այնպիսին դառնալ, ինչպիսին Հիսուսն է, քանի որ մենք այնքան հարուստ ենք՝ մենք ունենք փառահեղություն, որը նա արդեն մեզ է նվիրել և դեռ տալու է փառահեղություն, հատկապես, Աստծո հետ հավիտենական միասնությունը: Այնքան

արտակարգ է, որ մենք տառապանք ենք կրում երկրի վրա և կարողանում ենք ծառայել Տիրոջն ու մերձավորին, քանի որ մենք գիտենք, որ Քրիստոսի համար և Քրիստոսի հետ տառապելը իր վարձքն է ունենալու : Իր վարձքն է ունենալու Տիրոջն ու մերձավորին ծառայելը: Այն, ինչ տալիս ես Աստծո գործին, իր վարձքն է ունենալու: Այդ վարձքը հավիտենական միասնությունն է Քրիստոսի հետ: Այն փառահեղությունը, որտեղ մենք գնալու ենք, այնքան արտակարգ է, որ այլևս չենք մտածելու մեր տառապանքի ու ծառայության մասին: Անգամ, եթե ամբողջ կյանքը տառապել եք, դրա մասին այլևս չեք մտածելու, երբ դուք Հիսուս Քրիստոսի հետ միասին իր թագավորությունում լինեք: Աստված մեզ նաև առատորեն հույս է տվել, որով մենք կարողանանք ծառայել, և եթե անհրաժեշտ է, նաև կարողանանք տառապանք կրել: Դա մի հրաշալի խոստում է, որն Աստված մեզ է տվել: Աստված մեզ առատորեն է տվել, որպեսզի մենք կարողանանք սպասավորներ լինել խաղաղության թագավորությունում: Մի պահ դա պատկերացրեք: Աստված քեզ և ինձ այնքան առատորեն է նվիրել, թեև մենք տկար մեղավորներ ենք և ոչ կատարյալ, որ կարողանանք Քրիստոսի խաղաղության թագավորությունում ծառայել: Եվ, հետո մենք Աստծո ձեռքին գործիքներ ենք բոլոր ժողովուրդների համար : Աստված այսօր մեզ այնքան առատորեն է նվիրել, որ մենք մեր հոգևոր հարստությունը կարող ենք կիսել մերձավորի հետ: Եվ այսօր արդեն մենք այնքան շատ ունենք, որ մենք կարող ենք մեր հավատը և Աստծո ընծաները մյուսների հետ կիսել ոչ միայն խաղաղության թագավորությունում, այլ՝ արդեն այստեղ:

Սրանք մի քանի օրինակներ են ընծաների, որ մենք Աստծո Որդուց և Սուրբ Հոգուց ենք ստացել: Դրա համար մենք այնքան շնորհակալ ենք: Մենք պետք է դրանով բարի գործեր կատարենք: Մենք պետք է մերժենք այն բոլոր մտքերը, որոնք տհաճ են Աստծուն: Մենք պետք է ծառայենք Աստծուն: Մենք բավարար չափով ունենք, որպեսզի դա անենք: Մենք պետք է այդ ընծաները մերձավորի հետ կիսենք և տեղեկացնենք Հիսուսի ուսմունքը: Քրիստոսի գալստյան ժամանակ մենք ծառայելու ենք Աստծո թագավորությունում և գործիքներ ենք լինելու բոլոր ժողովուրդների համար: Մենք այնքան շատ պատճառներ ունենք Աստծուն գովաբանելու և շնորհակալություն հայտնելու: Եվ այդ շնորհակալությունը օրհնանք է մեզ՝ բոլորիս համար:

Հիմնական մտքեր

Ողորմածության լիառատությունը ունակ է դարձնում մեզ՝ երկրի վրա բարին անելու և Տիրոջ ճշմարիտ աշակերտներ լինելու:

Ես կցանկանայի, որ բավարար խոսքեր ունենայի դրա համար:

Լուսանկարը՝ ՄԱԵ Բրազիլիա

,, Այսօր մենք այս խոսքը հասկանում ենք Հիսուս Քրիստոսի տեսանկյունով,- այսպես սկսեց գլխավոր առաքյալն իր քարոզը: Երուսաղեմը եկեղեցու մի պատկեր է: Նկատի է առնված երկնային Երուսաղեմը՝ հավատացյալների համայնքը: ,, Եվ այդ համայնքին Աստված ասաց,- ես քեզ ազատելու եմ չարից: Եվ ես դեռ շատ մարդկանց եմ առաջնորդելու Երուսաղեմ,,:

,,Այսօր մենք այս խոսքը հասկանում ենք Հիսուս Քրիստոսի տեսանկյունով,- այսպես սկսեց գլխավոր առաքյալն իր քարոզը: Երուսաղեմը եկեղեցու մի պատկեր է: Նկատի է առնված երկնային Երուսաղեմը՝ հավատացյալների համայնքը: ,, Եվ այդ համայնքին Աստված ասաց,- ես քեզ ազատելու եմ չարից: Եվ ես դեռ շատ մարդկանց եմ առաջնորդելու Երուսաղեմ,,:

- Հիսուսը հաղթել է մահը և դժոխքը: ,, Նա ուզում է այդ հաղթանակը կիսել մեզ հետ: Նա լիովին մեզ ազատելու է չարից և մահից: Մենք այլևս ոչ մի գործ չենք ունենալու չարի հետ: Երբ Հիսուսը գա, մենք նրա հաղթանակի մասնակիցն ենք լինելու,,:
- Հիսուսը ստացավ հարության մարմին: ,,Հարության այդ մարմնով նա առաջինը գնաց Աստծո թագավորություն: Նա այնտեղ առաջինն է շատ եղբայրների շրջանակից և ուզում է այն մեզ հետ կիսել,,: Մենք գնալու ենք Աստծո թագավորություն: ,, Ես կցանկանայի, որ բավարար խոսքեր ունենայի այն նկարագրելու համար: Սակայն, դրա համար ոչ մի խոսք չկա: Հետևյալ միտքը կարող է մեզ օգնել, որպեսզի մենք այն պատկերացնենք՝ այդ փառահեղությունն այնքան մեծ ու հրաշալի է լինելու, որ մենք հավիտենականության մեջ ամեն օր մի պատճառ ենք ունենալու Աստծուն շնորհակալություն հայտնելու և գովաբանելու,,:

Բոլոր դեպքերում,-ասաց գլխավոր առաքյալը,- մենք կարիք չունենք անպայման սպասել մինչը Տիրոջ գալուստը: ,, Արդեն այսօր մենք կարող ենք նախապես ճաշակել դրանից: Ժամերգության ժամանակ մենք կարող ենք ապրել, որ Աստված մեզ ողորմածություն է նվիրում: Մենք արդեն այսօր կարող ենք Հիսուս Քրիստոսի վաստակը վայելել,,: Եվ դա, իսկապես, պետք է մեր շրջապատի մարդիկ նկատեն,- հորդորեց նա:.

Հիսուսն ի վերջո մահացել է բոլոր մարդկանց համար և դրա համար էլ նրա զոհաբերությունը վերաբերում է բոլորին: Դեռ շատ մարդիկ են առաջնորդվելու դեպի նրա քաղաք: Ուստի, դա վերաբերում է նրանց, ովքեր արդեն այնտեղ պատրաստի տեղ ունեն. ,, Գնացեք նրանց ընդառաջ, ցույց տվեք նրանց ճանապարհը, նրանց ճանապարհից մաքրեք քարերը,,: Մեր առաջադրանքը կլինի՝ նրանց ցույց տալ ճանապարհը մեր պահվածքով, մեր վկայությամբ, մեր խոսքով ու գործով:

Գլխավոր առաքյալ Շնայդերը խոսքն ավարտելով՝ ասաց. ,, Մենք պետք է մարդկանց համար ուղեկցորդներ լինենք: Դա է մեր նպատակը- դա է մեր ներկան – դա է մեր առաջադրանքը:

Տունդարձի ճանապարհին

Հիսուսը գնացել է տեղ պատրաստելու: Անակնկալ համար 1՝ այդ տեղը վաղուց պատրաստ է: Անակնկալ համար 2՝ մարդկությունը մեկ անգամ եղել է այնտեղ: Հարց է առաջանում ՝ինչպե՞ս են նրանք տուն վերադառնում:

2017-ի հոկտեմբերի 15-ին ավելի քան 114.000 մասնակիցներ- շատերը տեսահեռարձակման միջոցով- ապրեցին գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերի կողմից անցկացված ժամերգությանը ՝Քափշտատի Քլարեմոնթ համայնքում / Հարավային Աֆրիկա/ :

Շարունակել նայել՝ տեսնելու ամբողջ պատկերը

Երբ Հիսուսը այս խոսքերն ասաց, իր աշակերտների հետ էր և ներկայացնում էր, թե ինչ է սպասվում իրեն – դավաճանություն, տառապանք: Աշակերտներն իրենց տեղը չէին գտնում, բայց Հիսուսը նրանց բացատրեց իր մտադրությունը՝ նա գնում է իր Հոր մոտ: Դա էր նպատակը,- մեկնաբանեց գլխավոր առաքյալը: ,, Նա ուզում էր, որ նրանք պատմության ավարտն իմանան,,:

,, Դա վերաբերում է նաև մեզ: Մենք գիտենք, որ մենք պետք է տառապանքի միջով անցնենք, մենք գիտենք, որ մենք պետք է ծանր բեռ կրենք,,: Սակայն, Աստված չի տանում դեպի տխրություն և կարիք, այլ՝ տխրությունից և կարիքներից դուրս բերելով՝ տանում է դեպի իր թագավորություն: ,, Եկեք ունենանք այս ընդգրկուն տեսանկյունը, եկեք շարունակենք առաջ նայել Սուրբ Հոգով,,:

Որտեղ պետք է արդեն մարդը միշտ լինի

Հիսուսը գնաց՝ տեղ պատրաստելու: Ի՞նչ տեղ է դա: ,,Դա այն տեղն է, որտեղ մարդը միշտ պետք է լինի,,: Քանզի Աստված է ստեղծել մարդկանց, որպեսզի նրանց հետ միասնության մեջ լինի: Սակայն, մեղքի մեջ ընկնելու պատճառով իր կողքի տեղը

Լուսանկարը՝ ՆԱԵ Հարավային Աֆրիկա

44 տարի ծառայելուց հետո, որից 17 տարին՝ որպես առաքյալ, առաքյալ Զոն Գ Շթեֆենսը հանգստի է անցնում:

կորել է: Հիսուսը եկել է երկիր, որպեսզի այդ տեղը նորից պատրաստի՝ ,, Իր զոհաբերական մահով և հարությամբ մարդկանց հնարավորություն է տրվել Աստծո թագավորություն գնալու,- շեշտեց եկեղեցու ղեկավարը: ,, Այդ տեղը վաղուց պատրաստ է: Մեզնից յուրաքանչյուրն իր տեղն ունի երկնքում: Դա իրողություն է: Տեղը պատրաստ է և ընդհամենը սպասում է մեզ,,:

Ոչ միայն մնալ, այլ՝ գնալ

Այնտեղ տանող ճանապարհը պարզ է: ,, Ես եմ ճանապարհը,- ասում է Հիսուսը,,: ,, Եկեք այդ ճանապարհով գնանք,- ասում է գլխավոր առաքյալը,,- ճանապարհը, որը գցել է Հիսուսը դա՝

- հավատի ճանապարհն է՝ ,, Ես նա եմ, ով ուզում է հասկանալ, ով կարիք ունի ապացույցի: Սակայն, երբ խոսքը գնում է Հիսուս Քրիստոսի և նրա գործի մասին, ապա պետք է համաձայնեմ, որ ես այն իմ հասկացողությամբ ըմբռնել չեմ կարողանա: Եկեք առաջ գնանք հավատի մեջ,,:
- եկեղեցական խորհուրդների ճանապարհն է՝ ով ուզում է Աստծո թագավորություն գնալ, նա պետք է վերստին ծնվի սուրբ ջրով և Սուրբ Հոգով: Եվ, ով ուզում է հարություն առնել, նա պետք է ճաշակի Հիսուսի մարմինն ու արյունը: ,, Դա ոչ մի եկեղեցի չի հաստատել, դա Հիսուսն ինքն է հաստատել,,:
- հնազանդության ճանապարհն է՝,, Ով ուզում է Հիսուսին հետևել, պետք է նրա պատվիրանները կատարի: Անգամ, եթե դա դժվար է, մենք պետք է մնանք այդ ճանապարհին: Դա դեպի Հիսուս տանող միակ ճանապարհն է,,:
- անձնուրացության ճանապարհն է՝ ,, Հիսուսն ավելին է ուզում, քան՝ հնազանդ մարդն է: Նա ցանկանում է, որ մենք նմանվենք իրեն, որ նրա մտքերը դառնան մեր մտքերը: Մենք գտնվու՞մ ենք արդյոք փոփոխության ճանապարհին,,:
- միասնության ճանապարհն է՝ ,, Մենք պետք է սովորենք Քրիստոսի հետ միասնական լինել, քանի որ նա չի գալու, որպեսզի առանձին մարդկանց իր հետ տանի: Նա ուզում է տանել մի ամբողջ ժողովրդի, որը միասնական է,,:

,, Բավական չէ միայն այդ ճանապարհի վրա մնալը: Մենք պետք է առաջ գնանք,- այսպես ավարտեց գլխավոր առաքյալ Շնայդերը՝ ,, Հիսուսը նորից է գալու: Նա մեզ ընդառաջ է գալու, քանի որ նա գիտի, որ մենք միայնակ չենք կարող դա անել: Եվ, երբ ես աղոթում եմ՝ ,, Արի՛, խնդրում եմ, Տեր Հիսուս,, ; ապա ես կարող եմ իմ հոգով լսել, թե ինչպես է նա պատասխանում՝ ,,Այո, ես գալիս եմ, բայց նաև դու արի՛: Մի մնացեք կանգնած, շարունակեք գնալ այդ ճանապարհով,,:

Հիմնական մտքեր

Հովհաննես 14, 3,4

,, Եվ եթե գնամ և ձեզ համար էլ տեղ պատրաստեմ, դարձյալ կգամ և ձեզ կվերցնեմ ինձ մոտ, որպեսզի, ուր էլ ես լինեմ, դուք ևս այնտեղ լինեք,,:

Հիսուսն իր զոհաբերությամբ և հարությամբ Աստծո մոտ մեզ համար տեղ է պատրաստել: Նա նորից է գալու, որպեսզի իր հետ տանի նրանց, ովքեր կատարել են նրա պահանջները:

Հիսուսը փորձության է ենթարկվում

ՄԱՏԹԵՈՍ 4, 1-11

Հիսուսը իրեն մկրտել տվեց Հովհաննեսի կողմից, ապա Աստծո ոգին իջավ նրա վրա: Հետո Հիսուսը գնաց անապատ: Այնտեղ սատանան փորձում է նրան համոզել անելու այն, ինչ ինքը կասի: Բայց Հիսուսը նրան չի ենթարկվում:

Այն բանից հետո, երբ Հիսուսը Հորդանանում Հովհաննեսի կողմից մկրտվեց, Աստծո ոգին նրան տարավ անապատ: Այնտեղ նա սատանայի կողմից փորձության ենթարկվեց:

Քառասուն օր ու քառասուն գիշեր Հիսուսը պաս էր պահում, նա ոչինչ չէր ուտում: Դրա համար էլ նա քաղցած էր: Ապա նրա մոտ է գալիս սատանան և ասում՝,, Եթե Աստծո Որդին ես, ասա, որ այս քարերը հաց լինեն,,: Հիսուսը պատասխանում է նրան՝,, Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից“:
Ապա սատանան նրան տանում է դեպի Երուսաղեմ և կանգնեցնում տաճարի աշտարակի վրա: Նա ասում է Հիսուսին՝,, Եթե Աստծո Որդին ես, քեզ այստեղից ցած գցիր, որովհետև գրված է՝ իր հրեշտակներին պատվիրված է քո մասին, և ձեռքերի վրա պիտի վերցնեն քեզ, որպեսզի



երբեք քո ոտքը քարին չխփես,,։
Հիսուսը պատասխանում է նրան՝ ,, Գրված է՝ քո Տեր Աստծուն պիտի չփորձես,,։
Ապա սատանան նրան տանում է մի շատ բարձր լեռան գագաթ և ցույց է տալիս աշխարհի բոլոր թագավորություններն ու դրանց փառահեղությունը։
Նա ասում է Հիսուսին՝ ,,Այս բոլորը քեզ կտամ, եթե գետնին ընկնելով ինձ պաշտես,,։
Հիսուսը նրան պատասխանում է՝ ,, Ետևս գնա, սատանա, որովհետև գրված է՝ պիտի երկրպագես քո Տեր Աստծուն և միայն նրան պիտի պաշտես,,։
Ապա սատանան նրան թողնում է։ Հրեշտակները մոտենում են Հիսուսին ու ծառայում նրան։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍԻՆԹՀԻԱՅԻՆ՝ ՆՋԱՄԵՆԱ / ՉԱԴ/

բարև ձեզ, իմ անունը Սինթհիա է, ես տասներկու տարեկան եմ: Մեկ տարի առաջ՝ 2017-ին, գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը երեք ժամերգություն անցկացրեց Չադում, դրանցից մեկը՝ մայրաքաղաք Նջամենայում, որտեղ ես եմ ապրում: Ես իրավունք ստացա նրան ծաղկեփնջով ողջունելու:

Չադը մի երկիր է Աֆրիկայի սրտում: Հյուսիսը շատ չորային է, այնտեղ գտնվում են Սահարա անապատը և հրաբխային լեռներ: Քիչ հարավ ընկած է սահելյան գոտին, կիսաանապատ: Երկրի հարավում կան անտառներ և խոնավ սավաններ: Սա շատ կենդանիների հայրենիքն է:

Երկիրը ոռոգվում է երկու խոշոր գետերով՝Շարի և Լոգոնե: Դրանք Նջամենայի մոտ միավորվում են և միասին կարճ տարածք հոսելով՝ թափվում են Չադ ծովը: Մենք ապրում ենք քաղաքի եզրամասում, երբ ուզում ենք մեր քաղաք մեկնել , պետք է անցնենք Շարիի վրայով:

Կարո՞ղ եմ ներկայացնել իմ ընտանիքին: Ետևի շարքում դուք տեսնում եք իմ մայր Սաբինային, ինձ, իմ զարմուհի Քարոլինեին և իմ մորաքույր Ֆելիսիթեին: Առջևում կանգնած են իմ զարմիկ Ֆրեդերիկը իմ պապիկի հետ և իմ զարմուհի Անաստասիան իմ տատիկի հետ, հայրս, նա լուսանկարում չի երևում:

Մայրս աշխատում է որպես բուժքույր և շատ է ուղևորվում: Դրա համար էլ ես իմ զարմուհի Քարոլինայի հետ ապրում եմ մորաքրոջս մոտ: Նա մեզ շատ է սիրում և օգնում է տնային հանձնարարությունները կատարելիս: Քարոլինայի հետ միասին մենք հաճախում ենք հինգերորդ դասարան: Ամեն օր դասերը սկսվում են առավոտյան 7:30-ին և ավարտվում ժամը 17-ին: Շաբաթ օրերը ազատ ենք լինում: Չադում մենք ունենք երկու պաշտոնական լեզու՝ ֆրանսերեն և արաբերեն: Ախ, քիչ էր մնում մոռանայի, իմ կողքին կանգնած է Փաթինեսեն՝ մեր շունը:

Իմ ծննդյան օրից ի վեր ես նորառաքելական եմ: Իմ տատիկ Օդիլեն համայնքում շատ ակտիվ է: Իմ պապիկի անունը Դակոուա է, նա առաքյալ է: Նա ինձ քաջալերում է լինել ակտիվ երգչախմբում և կիրակնօրյա դպրոցում: Լուսանկարում դուք տեսնում եք մեր համայնքի կիրակնօրյա դպրոցի աշակերտներին, նրանց ծնողներին և մեր կիրակնօրյա դպրոցի ուսուցչին: Ընդհանուր առմամբ, ժամերգության ժամանակ մեր եղբայրների ու քույրերի թիվը հասնում է մոտ 50-ի:

Թոուքրայի մեր համայնքում ես ղեկավարում եմ կիրակնօրյա դպրոցի երգչախումբը: Դա ինձ մեծ ուրախություն է պատճառում: Շաբաթը երեք անգամ փորձ ենք անում: Եթե ես մի անգամ ուշանում եմ, երեխաները գալիս են մեր տուն՝ ինձ մոտ և հարցնում, թե վերջապես երբ է սկսվելու փորձը: Բացի դրանից, Քարոլինան և ես նվագում ենք սրինգ: Շրջանային առաքյալի օգնական Ջոն Սոբոտկան է այդ երաժշտական գործիքը ներածել Չադի նորառաքելական համայնքներ:

Աղբյուրը՝ Ամապիր՝ ,, Մենք երեխաներս,,; հրատարակություն 01/2018, լուսանկարը՝ մասնավոր – Էրիկ Իսեէլե

Լուսանկար՝ Հելեն Հոթոնի - fotolia.com

Փրկությունը նոր արարչագործության մեջ

Ավելի մոտ քեզ, իմ Աստված: Ի՞նչ դեր է խաղում հարսնացուական համայնքը հավիտենական փառահեղությունում: Նա առանձնահատուկ տեղ ունի՞, ավելի մոտիկ է՞: Պատասխանը հստակ է:

Դավանաբանությունը պարզաբանում է, որ նորառաքելական եկեղեցին խոստովանում է Քրիստոսի գալստյան հանդեպ հավատը, որը ձևակերպված է վաղ եկեղեցական հավատամքում: Մենք հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը նորից գալու է զորությամբ և փառահեղությամբ, որ դատի ողջերին և մեռելներին / Առաքյալների ծառայություն ՆԱԴ Հ/Պ 34/, և ,,մենք սպասում ենք ապագա աշխարհի կյանքին,, / Նիկիա- Կոնստանդնուպոլսի հավատամք ՆԱԴ Հ/Պ 35 /:

Երբ մենք խոսում ենք Հիսուսի գալստյան մասին, ապա առաջինը նկատի ունենք առաջնեկների համբարձումը: Դրա վրա է կենտրոնացած առաքյալների սպասավորությունը, մասնավորապես, այդ իրադարձության նախապատրաստությունը տասնիններորդ դարում առաքյալների անհատական սպասավորության վերականգնման պատճառներից մեկն է : Այս առումով, սակայն, կարևոր է աստվածային փրկության պլանի ամբողջականության հանդեպ տեսակետը չկորցնելը:

Աստված լիելու է ամեն ինչ՝ ամեն ինչում

Աստծո գործելակերպը հնարավոր է դարձնում, որ բոլոր ժամանակների մարդիկ փրկության հասնեն: Առաջնեկները, որոնց Տերն իր մոտ է տանելու, այն մարդկանց հետ են միանալու, ովքեր մեծ տխրության ժամանակ հանուն Քրիստոսի կամքի իրենց կյանքն են տվել: Հազարամյա խաղաղության թագավորության ժամանակ փրկությունն առաջարկվելու է բոլոր մարդկանց: Բոլոր նրանց համար, ովքեր որոշում են կայացրել հանուն Հիսուս Քրիստոսի, երաշխավարված է մուտքը դեպի նոր արարչագործություն, և նրանք ունենալու են աստվածային լիառատ կյանք, քանզի Աստված ,, լինելու է ամեն ինչ՝ ամեն ինչում,, / 1-ին Կորնթաց 15,28/: Այդ ժամանակ մարդիկ ապրելու են Աստծո հետ հավերժ միասնության մեջ: Հավերժ կառավարելու են խաղաղությունն ու ուրախությունը, քանի որ ամեն ինչ՝ նոր երկինքը, նոր երկիրը և նրանք, ովքեր ապրում են այդտեղ, համաձայն են լինելու Աստծո կամքի հետ: :

Պատկերներ ապագայից

Հիսուս Քրիստոսը կիրառում էր տարբեր պատկերներ, երբ նա խոսում էր փրկությունից: ,,Մնասների առակը,, / Ղուկաս 19/ կարող է այն մեկնաբանությունն ունենալ, որ կարծես լինելու է փրկության ,, հիերախիա,, ՝ իշխանը առաջին սպասավորին խոստանում է իշխանություն տասը քաղաքի վրա, իսկ երկրորդին՝ հինգ քաղաքի վրա: Սակայն, այս առակը թեմատիկորեն չի վկայում փրկության հիերարխիայի մասին, այլ ցույց է տալիս մի պահվածք, որն իր նշանակությունն ունի փրկությունն ըմբռնելու համար : Երբ Հիսուս Քրիստոսը խոսում է ,, իշխանություն ունենալու,, մասին, ապա դրանով պարզաբանում է, որ հավատացյալները

- ղեկավարելու են իր հետ միասին, այլ խոսքերով ասած՝ կիսելու են նրա փառահեղությունը,
- ստանալու են աշխատելու դաշտ, դա նշանակում է, որ նրանք շարունակելու են ծառայել նրան:

Ոչ մի հիերարխիա փրկության գործում

Հարց է առաջանում, թե ինչ տեղ է գրավելու հասարակական համայնքը նոր արարչագործությունում : Հովհաննեսի Հայտնությունում խոսվում է ,,նոր Երուսաղեմի,, սպասավորների մասին, ովքեր ծառայելու են Աստծուն և կառավարելու են նրա հետ:

Սրանք պատկերներ են Աստծո և միմյանց հետ մարդկանց միասնության վերաբերյալ: Այն մասին խոսել, որ Հայտնությունում նոր արարչագործության մեջ փրկության երկու կատեգորիայի մասին է հաղորդվում, համոզեցուցիչ չէ: Կարո՞ղ ենք մենք իսկապես հաստատել, որ նոր արարչագործությունում Աստծո հետ միասնության երկու դասակարգում կա, այսինքն՝ որ նրանք,, ովքեր Քրիստոսի գալստյանը մասնակցել են, մի բացառիկ տե՞ղ պետք է ունենան նոր արարչագործության մեջ:

Նման պատկերացումը չի համապատասխանում Նոր կտակարանի վկայությանը: Եթե Աստված արդեն ամեն ինչ է ամեն ինչում, ապա չի կարող այդպիսի բան լինել: Չկա ոչինչ, որ ավելի մեծ լինի, քան՝ հավիտենական կյանքի լիությունը, քան՝ հավիտենական միասնությունը Սուրբ Երրորդություն Աստծո հետ նրա փառահեղությունում և նրա լույսի մեջ:

Բոլորի համար՝ միասնություն Աստծո հետ

Տիրոջ հանդեպ սերն անբաժանելի է մերձավորի հանդեպ սիրուց: Հիսուսն իր յուրայիններից սպասում է, որ նրանք սիրեն իրենց մերձավորին այնպես, ինչպես ինքն է նրանց սիրում: Նա՝ կատարյալը, պատրաստ է իր ժառանգությունը մեզ՝ մեղավորներիս հետ կիսել, քանի որ նա սիրում է մեզ: Եթե մենք այնպես սիրենք, ինչպես Հիսուսը, չենք հիասթափվի, եթե նա մեր մերձավորին նույնը կամենա, ինչը նա մեզ է երաշխավորել ...

Ուրիշները վախենում են, որ մեր ընտրությունը կարող է հարցականի տակ դրվել, եթե ասվի՝ Աստված բոլորի համար հնարավոր է դարձնելու նոր արարչագործությունում լինելը ՝ իր հետ հավերժ միասնություն կազմելով: Սակայն, պետք է մտածել, որ մենք չենք ընտրվել, որպեսզի միայն մենք փրկվենք, այլ՝ որպեսզի հնարավորություն ունենաք որպես առաջինը փրկություն գտնել: Չմոռանանք, մեր ընտրությունը առաջին հերթին կանչն է: Մենք կանչված ենք ծառայելու Տիրոջը, տեղեկացնելու և վկայելու Աստծո բարեգործությունների մասին՝ այսօր ու խաղաղության հազարամյա թագավորությունում: Այդ ծառայությունը մենք պետք է ուրախությամբ իրականացնենք, որպեսզի Աստծուն շնորհակալություն հայտնենք իր ողորմածության համար, և ոչ թե նրա համար, որպեսզի հատուցում ստանանք:

Լուսանկարը՝ Օլիվեր Ոյութենի

Կոնֆիրմացիայի երդման նշանակությունը

Այն սկսվում է մկրտությամբ: Նորառաքելական եկեղեցու կոնֆիրմացիայի երդումը ավելի քան 1700 տարեկան է: Որտեղից է վերցրվել տեքստը և ինչ է նշանակում այն:

Կոնֆիրմացիայի այսօրվա երդումն ամփոփված է մի տեքստում, որը Քրիստոսից հետո 3-րդ դարում է կազմվել: Այդ տեքստն անվանում են ,, թրադիթիո ապոստոլիկա,, ; որը լատիներենից թարգմանած նշանակում է՝ ,, առաքելական ավանդություն,,: ,,Առաքելական ավանդությունը,, վերագրում են Հռոմի գիտնական Հիպպոլիտին: ,, Առաքելական ավանդությունը,, բացի 2-րդ դարից եկող ,, Դիդախեից,,՝ ,, 12 առաքյալների ուսմունքից,, ; ամենակարևոր աղբյուրն է համայնքային կյանքի և վաղ քրիստոնեական համայքների ժամերգությունների արարողակարգի համար:

Կոնֆիրմացիայի երդման մեր տեքստը գտնվում է ,, Առաքելական ավանդության,, մեջ՝ մկրտության խոսքում: Այսինքն՝ ի սկզբանե կար մկրտության երդում, որը բոլոր կանոններով տալիս էին մեծահասկանները, ովքեր հանուն Քրիստոսի էին որոշում կայացրել և ավարտել մկրտության դասընթացը: Եթե երեխաներն էին մկրտվում, ապա նրանց փոխարեն երդում էին տալիս ծնողները կամ ընտանիքի անդամներից մեկը: Նորառաքելական եկեղեցում մկրտության հին երդումը վերափոխվել է որպես կոնֆիրմացիայի երդում: Դրանով երդումները, որոնք ծնողները մկրտության և

կնունքի ժամանակ են տալիս, հաստատվում է կոնֆիրմանտի կողմից:.

Կոնֆիրմացիա հասկացությունը ծագել է լատինական ,, կոնֆիրմաթիո,, բառից, որը նշանակում է ուժեղացում, ամրացում: Կոնֆիրմանտների կողմից ուժեղանում է եկեղեցական խորհուրդներն ընդունելու և կյանքում Քրիստոսին հետևելու համար ասված ,,այո,,-ն:

,,Կոնֆիրմացիայի երդումը բաղկացած է երկու ,,բանաձևերից,,: Մեկը մերժման բանաձևն է, իսկ մյուսը՝ խոստովանության: Նրանցով արտահայտվում են հիմնավոր որոշումները, որոնք պատկանում են քրիստոնյա լինելուն: Չարին ասված ,,ոչը,, մերժումն է սատանային: Սուրբ Երրորդություն Աստծուն ասված ,, այո,,-ն նշանակում է նվիրվել Աստծուն՝ որպես մեր կյանքի Տիրոջ:

Մերժման բանաձևը այսպես է հնչում՝ ,, Ես մերժում եմ սատանային և նրա բոլոր գործերն ու էությունը,, / բնօրինակում այսպես է՝ ,, ես մերժում եմ քեզ, սատանա, քո բոլոր պերճությունը / լատիներեն՝ սերվիթիո/ և քո բոլոր գործերը,,/: Այս բանաձևի հիմքում ընկած է այն միտքը, որ կոնֆիրմանտը կամովի երես է թեքում չարից, որը անձնավորված է սատանայի կերպարում, և այդ պահից ի վեր նա դա անում է իր սեփական պատասխանատվությամբ: Չարի գործերի օրինակներից են՝ Աստծուց հեռանալու համար մոլորեցումը կամ նրան դեմ հանդես գալը, կուռքերին պաշտելը, Քրիստոսի զոհաբերությունն արհամարհելը, աստվածային կամքն արհամարհելը, սիրո բացակայությունը կամ կամքի անզուսպ ուժը : Այն մարդը, ով այդ բանաձևը հավատով է ասում, ուզում է այդ ամենից իրեն հեռու պահել:

Մերժման երդումը չի նշանակում, որ մարդը մեղքից ազատ է և նրան միշտ հաջողվում է խուսափել չարի ազդեցությունից: Այն ավելի շատ արտահայտում է, որ կոնֆիրմանտը գիտակցում է իր մեղսունակությունը և չի ուզում կյանք վարել չարի ոլորտում և Աստծուն հակադրվել: Դրա համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու ուղեկցումը, որի շնորհները կոնֆիրմանտը արդեն ընդունել է: Միայն սեփական ուժով մարդը չի կարող երդումը պահել:

Մերժման բանաձևին հաջորդում է խոստովանության բանաձևը, այն այսպես է հնչում՝ ,, Ես ինձ քեզ եմ հանձնում, ով Երրորդություն Աստված՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի՝ հավատով, հնազանդությամբ և մինչև վերջ քեզ հավատարիմ մնալու լուրջ մտադրությամբ ,,:

> ,, Ես մերժում եմ սատանային, նրա բոլոր գործերն ու էությունը և հավատով, հնազանդությամբ ու լուրջ մտադրությամբ ինձ նվիրում եմ քեզ, ով Երրորդություն Աստված՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Քեզ հավատարիմ եմ մնալու մինչև վերջ: Ամեն,,:

Նախ նա, ով այդ բանաձևն ասում է, պարզաբանում է, որ Երրորդություն Աստծուն ընդունում է որպես իր Տեր, ով պետք է որոշի կյանքը: ,, Հավատն,, ու ,, հնազանդությունը,, Աստծո հետ անցկացվող կյանքի էական ասպեկտներ են: Աստծո հանդեպ հավատը նշանակում է՝ նրա նկատմամբ վստահություն ունենալ: Աստվածային կամքին ,, հնազանդությունը,, հավատի էական հետևողականությունն է: Վերջապես, խոսքը է գնում ,, լուրջ մտադրության,, մասին: Դրանով արտահայտվում է, որ խոստովանության բանաձևը ոչ թե հենց այնպես է ասվում,այլ՝մարդուհամարայնլուրջնշանակություն ունի: Այս առումով հավատարմությունը, որը խոստանում է կոնֆիրմանտը, ոչ այլ ինչ է, քան՝ պատասխան Աստծո հավատարմության, որն արտահայտվում է խորհուրդների նվիրաբերմամբ և պաշտպանող ուղեկցությամբ:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասե 243, 8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոր- Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Տեղեկացում

01.04.2018	Նոթինգհեմ (Մեծ Բրիտանիա)
08.04.2018	Քարլսռուհե (Գերմանիա)
15.04.2018	Տորոնտո (Կանադա)
22.04.2018	Թրեբասելեգիե (Իտալիա)
29.04.2018	Լիվինգսթոն (Զամբիա)
10.05.2018	Թրիր (Գերմանիա)
20.05.2018	Վաշինգտոն (ԱՄՆ)
03.06.2018	Օսթերմունդիգեն (Շվեյցարիա)
10.06.2018	Լուանդա (Անգոլա)
17.06.2018	Լայփցիգ (Գերմանիա)
24.06.2018	Լանդսհութ (Գերմանիա)

New Apostolic Church
International